

Ի դեպ



Անյուդարչ

8

3

ՄՂՁԱԻԱՆՁ
Պօղոս Գուրբերեան

11

ԵՐԹԵԻԵԿ
Գուրգէն Արզումանեան

19

ԱՆՏԱՌ
Գրիգոր Պըլտեան

26

«ՄՆԱՍ ԲԱՐԵԱԻ ՈՉ ՈՔԻ»
Արա Գազանճեան

29

ՋՈՒԼԿԼ ԳԱՋԱՆՃԵԱՆ
(1936-2009)
Մարուշ Երամեան

Խմբագրեց՝ Էլիզաբեթ Գրիգորեան
E teb • 2354 Pennerton Dr. • Glendale, • CA 91206
eteb@earthlink.net • www.eteb.com
© 2009 E teb

Մինչեւ կոկորդը Արչին կշտացած, լիացած էր Փրիուէյ կոչուած հրէշին հետ կենակցելէն, առանց հաւէսի անոր գիրկը մտնելներէն, եւ անոր հետ լեզու գտնելու անկարելի փորձերէն: No, thank you, merci beaucoup, gracias senior, no mas. Բաւական է քաքոտ գոյութիւնդ կոկորդնէս վար հրելու եւ քիթերնիս բերաննիս քսելու փորձերուդ: Դուն քեզի պահէ տխեղծ ներկայութիւնդ եւ հերիք է ամբողջ մարդկութեան ոռը մատ նետելներդ, խեղճ ու անտէր պետութիւններուն ղեկավարները խամաճիկներու նման աջ ու ձախ տրորելդ...

Ի վերջոյ խենթ մը, Արչակունի մը պիտի յայտնուէր, մէկը որուն մէջ տակաւին բրթուճ մը մարդկութիւն մընացած է, Փրիուէյի երեսին մէյտաւն կարդալու, ուժին գիտակցութենէն անբարտաւանացած վիշապին գլուխը ոլորելու, գէթ բարոյական կից մը իջեցնելու: Ի վերջոյ, մէկը, անեղծ հոգի մը պիտի յայտնուէր վիշապին դէմ ծառանալու ու անոր սկրթուած երեսին գոռալու՝ I am warning you mister Freeway, don't fuck with me...

* * *

Ծրագրուածին հիմամբ, կանուխէն, առաւօտեան չորսի ատենները, զարթնեցաւ: Արդէն նախորդ գիշեր, ստացած թերթերուն բաժանորդագիները ուղարկած էր, քրէտիոյ քարդերուն հաշիւները փակած: Ունեցած չունեցածը տղոց անունին անցուցած: Իսկ իր գանձելիքները՝ թող

մամանին կաթին պէս հալալ ըլլար: Մենամարտ ու թէժ կռիւ էր: Մարդ չէր կրնար նախատեսել ելքը: Թող որ վաղը կարգ մը աժան-կարապետ խմբագիրներ ետեւէն չբամբասէին՝ «Սրիկան, թերթերնիս ձրի կարդաց... եթէ մեռնիլ մը կար, եթէ Փրիուէյին հետ չափուիլ մը կար, գոնէ մեր բաժանորդագիներ չուտէր...»

Ամիսներով տքնած, գլուխը հագար ու մէկ քարի զարկած էր, թէ Փրիուէյին ինչպէս մահացու հարուածը պիտի հասցնէր, ինչպէս պիտի գգեանէր: Եթէ ինք նախաշարձակ չդառնար ու քանդուամը չսկսէր, փոխարէնը՝ վիշապը գինք կուլ պիտի տար, վիշապը գինք շարքէն հանէր, ծունկի պիտի բերէր: Արչակունիներն ու միւսները, ամբողջ մարդկութիւնը կուլ պիտի երթար վիշապի անյագ ախորժակին: Եթէ հայր չծառանար ու չքանդէր չարիքի իշխանութիւնը՝ ինչպէս նախահայր Հայկը Բեյին անբարտաւանութեան դէմ ծառայաւ, ամբողջ հասարակութիւնը գոհ պիտի երթար վիշապ արքային անյագ ախորժակին: Եթէ ինք չըլլար հրապարակ իջնող այլախոհ, ոչ ոք յանձն պիտի առնէր այդպիսի խելառ ու անտրամաբանական, ինքնասպանական քայլ մը:

Անմիջական դրացնութեան մէջ բանող Հոլիուուտեան շրջանակներու մօտ, Փիլմի սենար մը տասը դիմագիծ կը փոխէր մինչեւ որ հրէական դրամագլուխի օրհնութեամբ եւ ինչու չէ անոր օգնութեամբ, քաջութիւնը հաւաքէր երկչոտ նախաձեռն մը նետելու սպիտակ պաստառի ուղղութեամբ:

Ինքն ալ իր կարգին, հագար կտոր ըլլալէ եւ գլուխը Փրիուէյի կրողիւսեայ պատին բիւր անգամ զարնելէ ետք հասած էր իր վերջնական որոշման՝ խորհրդանշական

իր արթին գործադրման:

Գաղտնօրէն կազմեց Ֆրիուէյի յատակագիծը ու մու-
թին մէջէն չափեց չափչփեց անոր խրոխտօրէն բարձ-
րրացող պերճաշուք սիւներուն շրջագիծը: Սա այն վայրն
էր, ուր տարիներ առաջ, մանչը քսուրուտելով Ֆրիուէյի
սիւներուն իր անդրանիկ խիզախումը անոր դէմ, առանց
քերթուքի, գլուխ հանած էր: Այդ յետմիջօրէին, Արչին,
սրտի իր առաջին տազնապը անցուց: Եւ Ֆրիուէյի այդ
էլքը, բնական էր, որ խորհրդանշական իմաստ զգենուր
հայուն ենթագիտակիցին մէջ: Այդ շրջագիծէն կը սկսէին
իր բերկրանքն ու երկարաձգուող անհաշուելի տառա-
պանքները, անդոհը, ցաւն ու հիասթափութիւնը:

Միամիտ չէր Արչին, իր բոլոր դժբախտութիւնները
Ֆրիուէյի անհոգիութեան վերագրելու: Իր մէջ զետեղ-
ւած ըմբոստն էր որ պիտի կակուղցուէր, տարրալուծ-
ւէր քաղցրահամ, անգոյն, թափանցիկ հիւթ դառնար,
համալըրկըրով, շերտ մը փիցցայով, հաթ-տոկով, քոքա քո-
լայով, փոռնոյով ու միասեռական անկաշկանդ ապրելա-
ձեւով գոհանալու: Ամէն ըոպէ իրմէ ակնկալուածը՝ ա-
մէն ըոպէ իրեն պարտադրուածը՝ ամէն քայլափոխին,
ազգայինը մոռցիր, մարդկայի՛նը գոհելն է, իրաւա-
խոհութեան գալն է: Տակաւին կը յիշէր չորրորդ սերունդ
ամերիկահայը, որ կը փորձէր զինք իր թմբիւրէն ար-
թընցնել:

«Listen my friend, այս երկիրը անբարոյ կերպով եւ
անխղճօրէն դրամ վաստկելու տեղ է: Իտէյալ հասարա-
կութիւն հիմնելու ոռիցաւ բուրող քու հնամաշ գաղա-
փարներդ, տակաւին՝ հոսանքին դէմ թիավարելու ճի-
գերդ, լաւագոյն պարագային՝ կը մաշեցնեն մարդս ու

չսպասուած սրտի տազնապով մը, կանխահաս, ժամա-
նակէն առաջ ոտքերդ տնկել կու տան...»

Ինչքան ալ բնիկ ամերիկահայուն ըսածը ճշմար-
տութեան համապատասխանէր, ինչքան ալ անիկա ան-
տազնապ զառանցէր, մէկ էր, Ֆրիուէյի, հի՛նի քանդու-
մը, մէկը, տեղէ մը պիտի սկսէր: Այդ ընտրեալը ստուե-
րին մէջէն դուրս գալով պիտի խիզախէր:

Ինչո՞ւ սա տնտնալներն ու ձգձգումը: Առնուելիք
քայլը, կատարուելիք աքթը կեդրոնացում, վճռակա-
մութիւն կը պահանջէր:

* * *

Պատրաստ էր գործելու: Հնացած վեց անիւներ, ի-
րարու շղթայուելով, կարծես շուրջպարի ելած, բո-
ցավառ աքցանի մէջ պիտի առնէին կրաղիւսով ու
պողպատով ամրացուած ամեհի սիւնը:

Գիշեր մը առաջ, հնացած փիքափի ին մէջ պիտի տե-
ղաւորէր անիւները, ինչպէս նաեւ՝ քարիւղով լեցուն եր-
կու քսան լիթրանոց ամանները, որոնց պարունակու-
թիւնը անիւներու մէջ պիտի պարպէր:

Լուսածագէն առաջ խաչ մը հանելով պիտի շարժէր
դէպի նպատակակէտ: Ֆրիուէյի քանդումը սկսելու հա-
մար ընդամէնը լուցկիի շիւղ մըն էր հարկաւոր: Ծրագ-
րած տէքօրի ու ահաբեկչական աքթը, տեղէ մը պիտի
սկսէր եւ մուրի ու համատարած փոշիներու ընդմէջէն
հեռաւոր տեղ մը, երկրագունդին անդիծայրը՝ իր լրու-
մին պիտի հասնէր:

Բոցավառ, հրաշագործ անիւներու օգնութեամբ կը-

րադիւսեայ առաջին սիւնը հրոյ ճարակ պիտի դարձնէր, բոցերը պիտի լափլփէին գայն: Հեռուէն, դիտողները պիտի խորհէին, թէ թուցուցած էր Արչին... Կրակով փորձել կրադիւսը այրե՞լ: Անհեթեթ այս սենարը անիկա մրտաքին մէջ քանիցս կրկնած, փորձարկած, մեկնաբանած էր: Առաւօտուն, շաղախուող լոյսի ցոլքերուն հետ եւ երեսին քսուող ցողին խոնաւութիւնը շնչելով, ծրագրին առաջին մասը պիտի գործադրէր մինչեւ որ մօտակայ միայարկ տուներէն քունը փախած անկլօ պառաւ մը, լոմաթիզմէ ծամածռած մատներով, հեռաձայնի ընկալուչը վերցնէր եւ 911 սեւաթոյր թիւերը հաւաքելով, ոստիկանութենէն շտապ օգնութիւն հայցէր:

- Ալո՛, ձեր ճարպոտած յետոյքները շարժելով ալ եկէ՛ք տեսէք, թէ ի՛նչպէս միջին արեւելքցիի արտաքինով մարդ մը Ֆրիուէյը կ'այրէ կոր... գոչեց պառաւը:

- Ներողութիւն, ի՞նչ ըսիք, պեթոնապատ Ֆրիուէյը ինչպէ՞ս կարելի է այրել,-հարց տուաւ կին ոստիկան մը քնոտ ձայնով, խելքը թուցուցած պառաւի մը հիւանդ երեւակայութեան վերագրելով «Ֆրիուէյ այրելու» աքթը:

Ապա՝

- Խնդրեմ, ձեր հասցէն եւ անուն մականն՞ւնը:

- Դարձեալ կրկնեցէ՛ք... Rusty Pellican ճաշարանին նա-յող Ֆրիուէյի սիւնն է ջահի պէս այրո՞ղը, միջին տարիքով արեւելքցիի նմանող գիժի մը կողմէ՞... Տիկին խնդրեմ ըսէք, արդեօք այդ բոլորը չէք երեւակայե՞ր...:

- Are you kidding me? Սեպտեմբեր 11ի Աղէտն ալ քիթի ծակ չունեցող մեր նախագահին երեւակայութիւն թւեցաւ: Հենց հիմա պատուհանիս բացուածքէն յստակ կը տեսնեմ բոցավառուող Ֆրիուէյն ալ, հրձիգ միջին արեւ-

ելքցի ահաբեկիչն ալ...

- Լա՛ւ լա՛ւ, մի՛ յուզուիք, ձեր պաղարիւնը պահեցէ՛ք, անմիջապէս ոստիկան ու հրչջջ ուժեր կը հասնին արկածի վայր...:

- God bless you!

- God bless America!

- Կապը պահեցէ՛ք,- թելադրեց կին ոստիկանը: Գլուխէն ցանելով գանկը ճաթեցուցած պառաւը:

Հիւանդագին մանրամասնութեամբ, Արչին երեւակայած ու ծրագրած էր այս բոլորը: Քիչ ետք ոստիկանական մեքենայ մը, լուսարձակներն ու ահագանգ ճշոցը միացուցած, քամիքազի արագութեամբ քշելով Կլէնտէյի կեդրոնական պողոտաներէն հասած էր նշեալ վայրը: Հեռուէն ջահի պէս վառուող Ֆրիուէյի սիւնը տեսնելով, ռատիոյի ներքին ցանցով, հրչջջներու կեդրոնատեղիին ուղղութեամբ ահագանգ հնչեցուց:

Մինչեւ որ իրլանտացի հրչջջները իրենց քաքոտ վարտիքներուն վրայէն կաշեպատ համազգեստները հագուէին, կապիկի արագութեամբ հրչջջ մեքենաները մագլցէին եւ ջիդերդ քայքայող ճչակներով արթնցնէին քաղաքին քնացած բնակիչները, ռատիօ-թելեֆոնի մէջէն ծամոն ծամելու նման բերանը ծամածրելով «մատըր ֆաքը՛ր, յիմար մը Ֆրիուէյը կ'այրէ կոր» կրկնէր հրչջջներու ջոկատապետը, մինչ այդ, անիւներու ձգախէժը, պէնզինի հետ միախառն՝ բոցերու լեզուակներով կլանած պիտի ըլլային կրադիւսեայ սիւնը:

Հրչջջները, կերպընկալ խողովակները միացուցին ամէն փողոցի ծայրամասը գետեղուած դեղնագոյն հսկայ 5 inch նոց ծորակներուն, հարիւր ոտք միջոցէն, ջրվէժի

նման ջուր կ'արձակէին բոցկլտող Փրիուէյին ուղղութեամբ: Հեղուկի սառն հպումէն, խարկուած կրահիւսը կը սկսէր ճարճտիլ ու փշուր փշուր թափիլ:

Սակայն, երբ հրշէջները աւելի եւս մօտեցան բոցերուն, գիշերանոցներու մէջ կծկուած՝ ահագանգը իրենց դիմագիծերուն պտրտցնող ականատեսներու քնոտ աչքերուն առջեւ, զարմանահրաշ բան մը պատահեցաւ: Յանկարծ, հեթանոս պաշտամունքի լծուած նախամարդուն, կամ Ամագոնի բնիկներուն նման, հրշէջներու ջոկատը, իրենց կազմածները լքած, սկսան կրակը երկրպագել: Ներկայ խուռներամ բազմութիւնը զարմանքի եւ մասամբ մըն ալ՝ հիասթափութեան մատնելով, անոնք սկսած էին գետնէն հաւաքել փայլուն մետաղի փայլիլող կտորներ, որոնք կարմիր բոցերու ցոլքերուն տակ ոսկեղրամի կը նմանէին:

Խորամանկ արեւելքցին, անիւներու քանդիչ գործունէութեան ու բոցերու լլկիչ համանուագին քիչ մը աւելի ժամանակ տալու համար, մետաղեայ նոր թուազըրուած տոլարանոցներ ցանած էր կրակին շուրջըրըրը, որոնք երկինքէն մաղուած բոցավառ աստղափոշիներու նման կը փայլիլէին:

Հին լաւ օրերուն, պատահած էր որ Փրիուէյներու երկրի տարածքին, դրամը ծառերուն վրայ բուսնէր քոքոյի հատիկներու տեսքին տակ, պարարտացնելով Ինգա ցեղապետերուն քսակները: Հիմա ալ, միլիառատէրերուն պարտէզը միայն կ'աճէր տոլարը: Նոր օրերու ամերիկացին եթէ գետինը յանկարծ կլոր սէնթ մը նշմարէր, մէջքը երկուքի ծալելով կը վերցնէր գայն «բախտաբեր է» մտածելով:

Աւետեաց այս երկիրը ոտք դնելէն ի վեր, մէկ բան

յստակ էր, «բախտ» կոչեցեալը շուռ գալով ճամբեգրի կոյուղիին խառնուած էր: «Բախտը»՝ հանրապետականներու, Թեքսասի քարիւղահորերու տէրերուն եւ Սան Ֆրանսիսքոյի կէօթերուն բաժին ինկած էր:

Եւ անբախտներու հրշէջ ջոկատը, հրդեհը մոռցած, սկսաւ հաւաքել հայուն ցանած մետաղեայ տոլարանոցները... որոնց ցոլքերը այդ պահուն հետաքրքիր բազմութեան դէմքերուն վրայ կը խաղային:

Պօղոս Գուրբելեան

Հատուած մը «Ֆրիուէյ 2» անտիպ վէպէն: (Խմբ.)

~ ԵՐԹԵՒԵԿ ~

*

Վայ

ի՞նչ տարիք ունէր որ
ափսոս

որտեղից որտե՞ղ
ցը ցը ցը

կասեն
զլուխները հակած Ասպարէզին
երբ կարդան ազդը
եւ տեսնեն ընտրեալ պատկերը ժպտուն
ամենա

անխօս

միշտ եւ այլեւս:

*

Անիմաստ խօսքի

իմաստի

փնտռողների թիւը բազում

ինչ տարբերութիւն

այս թէ՛ այն կողմ նետուած պատկերը

պատ է ու կեր

չես կշտանայ ինչքան էլ ուտես

բառն է կարծեմ անկշտում

իսկ զիրը անհատ

ճարպկօրէն հատես

մեծահոգաբար իրը բաժանես

կը մնայ գիմը

նոյն մօտեցմամբ գիմից էլ իմը

որ իմը չէ

քոնը չէ

իրը չէ

երկիմաստ է թերեւս այնքան

որքան անիմաստ

իմաստի փնտռողները բազում

փնտռողների

փոքրաթիւ գտնողների

փոխն ի փոխ

կորցնողների ու

այլափոխողների:

*

Երեսուն տարի առաջ

յետոյ

լոյսի

տաք համբոյրը շաղին

պայթեցրեց փիթիած ծաղկունքի բոյրը անտես

պատճառելով ոչ մի գոհ

մինչ ռուսական դեսպանատան

խիտ աղիւսահիւս

պատի երկայնքի մայթով

կամաց

Արմանը

դեղին շապիկ հագին

քայլում էր

մտածելով եթէ երեսուն տարի անց

դիմացից գայ

հագին գմրուխտ շապիկ

եւ երեսուն տարի յետոյ

հանդիպի իրեն

բեռնաւորուած գրքերի կապոցով

շապիկը նարնջենու ծաղկունք

որ երեսուն տարի յետոյ

քայլելու է դէպի

Արմանը

ձմրանը

շապիկն արդէն պատուած

իջնող փաթիլներէ

կախարդական համբոյրը յօնքերին

նո՛յն

այս փողոցի

ճի՛շդ

անկիւնում

ասելու փորձանքին ենթակայ

չվարանի

ասի

դարձիր

ի՞նչ կանի:

*

Ահա

կաս

կարմիր

գրերով լրագրերի ճակատին

միայն

չլինելուդ լուրը

ոչ այլ բան ասես

ոչ այլ տեղ

կամ ժամ շրջանցելի

որպէս առիթ նախավերջին խօսքի

ինչպէս կաւիճով

ասֆալտին գծուած մարմնի հետք

որ նաեւ ընդգծումն է ծաւալուող փողոցի

թաղի

քաղաքի

ամբողջ երկրի

ըստ որոշ մեկնաբանութեան

ցեղասպանուած

դիակի:

*

Տեսան

ուրախացան

ողջագուրուեցին

եւ ասացին՝

լաւ էր, հանդիպենք, հը՞:

Անցաւ մի հինգ տարի

ինչ որ տեղ նորէն տեսան իրար

չատ ուրախացան

ջերմօրէն ողջագուրուեցին

եւ ասացին՝

չա՛տ լաւ էր, հանդիպենք, հը՞:

Երկրորդ մի հինգ տարին եւս սահեց
ինչ որ առիթով տեսան իրար կրկին
չափազանց ուրախացան

սրտանց ողջագուրուեցին
եւ անկեղծօրէն ասացին՝

չա՛տ, չա՛տ լաւ էր, հանդիպենք, հը՞:

Այս անգամ

չգիտես քանի մի հինգ տարիներ

թռան գնացին

սակայն հաստատ է որ այլեւս

հանդիպելու են այսպէս:

*

Տարեցին բերեցին, տարեցին բերեցին
տարեցին բերեցին, տարեցին...

*

Տեղադրիր մարտկոցը:

Պատուող սլաքը դարձրու թռականի վրայ:

Գործածիր գումարում եւ հանում ստեղները

ճշդելու համար տարին: 2009:

Գործածիր գումարում եւ հանում ստեղները

ճշդելու համար ամիսը: Ապրիլ:

Գործածիր գումարում եւ հանում ստեղները

ճշդելու համար օրը: 24:

Պատուող սլաքը դարձրու ժամի վրայ:

Գործածիր գումարում եւ հանում ստեղները

ճշդելու համար ժամը: Կէսօրից առաջ տասնմէկ:

Գործածիր գումարում եւ հանում ստեղները

ճշդելու համար րոպէն: Կէսօրից առաջ կրկնակ գէրօ:

Օգնելու համար ձեզ, որ պատկերացում ունենաք

ինչպէս լաւագոյնս ծրագրաւորել ժամապահը՝

թերեւս անհրաժեշտ է նախօրօք թղթի վրայ

պատրաստել ջրումի նախագիծ:

Արդ, պատուող սլաքը դարձրու կայանի վրայ:

Գործածիր գումարում եւ հանում ստեղները

ճշդելու համար կայանը: Կայան թիւ մէկ:

Գործածիր գումարում եւ հանում ստեղները

ճշդելու համար կայանի ցնցուղները բաց պահելու
ժամկէտը: Մէկ րոպէ:

Նոյնը կրկնել կայան թիւ երկու

կայան թիւ երեք եւ կայան թիւ չորսի համար:

Սեղմել ներածման ստեղը:

Պահին, բակը կը ջրուի հերթաբար

կայան առ կայան, մէկ րոպէով:

(Զսեղմել վերածրագրումի ստեղը

միթէ որ ցանկանաք ամբողջովին ջնջել

ձեր ծրագրումը):

*

Գնաց եկաւ, զնաց եկաւ
զնաց եկաւ, զնաց...

*

Միայն երթի նկարագրութիւն

զուսպ

քողարկուած ծարաւի խիստ փափագով
չգիտես որն է կարեւորը

էականը

ե՞րթը

թէ՞ ծարաւի հագեցումը

թէ՞ ոչ մէկը

թէ՞ ոչինչը

կամ ամէն ինչ

հում կաւի պէս ցցուած

փշրուում է ոտքի տակ

ամէն քայլափոխի

այլափոխումը հոգու

նախ խնամքով շարադրուած

բառ առ բառ

վճիտ մելանի կապոյտի զանազանութեամբ

մերթ ճնշումը շատ

մերթ նուազ

մուգ ու բաց

յետոյ

հետզհետէ որքան քայլերը թուլացան

նոյնքան մատների ուժը նուազեց

կարծես տկար ձեռքերով սպիտակ էջերին բացէր

հոսքը

վէտվէտուն ալիքները

տեղ-տեղ ալեկոծ

տեղ-տեղ թաց

զրերը գերացած

ներծծուած թղթի հենքին

թերեւս աղի որ աւելի սաստկացնէր

տեւական զգացմունքը ծարաւի:

Երթի նկարագրութիւնը ո՛չ խորագիր ունի,

ո՛չ ստորագրութիւն, ո՛չ էլ էջերն են համարակալուած:

Նկարագրութեան մէջ ո՛չ թիւ կայ, ո՛չ թուական,

ո՛չ էլ որեւէ վայրանուն կամ հասցէ:

Տրցակը զննելիս, էջերը ձեռքիցս սահեցին,

այնպէս թուաց վճիտ կապոյտով գրուած տողերը

հոսեցին սալահատակին, նախադասութիւնները՝

խառնուեցին, բառերը տարանջատուեցին,

տառերը վեր ցատկեցին կաթիլների պէս եւ

թափուեցին յատակին որպէս մէկ ափ ջուր:

*

Մլեց ծաղկեց, ծլեց ծաղկեց

ծլեց ծաղկեց, ծլեց...

*

Ծաղկած այս ծառը

ձմեռներ տեսած

որքան նման է ծաղկած ծառի:

Գորգէն Արզումանեան

Լերան կողն ի վեր: Սեպ:

Կը բարձրանամ: Գուցէ անոր զգայութիւնն է: Բուներուն միջեւ լոյսի, ստուերի խաւեր՝ որոնք կը բծաւորեն միջոցը, կը շերտեն: Ուղղահայեաց ալիքաւորում գիծերու: Խափ, խորունկ, հովասուն թափանցկութիւն մը: Թերեւս նաեւ նոր փարատած մշուշի ծուկէններ՝ որոնք կը կախուլին ճիւղերէն, կը քայքայուին: Փայլեր կը կըտրատեն կատարները, բայց արեւը չկայ, կը մնայ անտեսանելի: Գուցէ ետիս կամ լերան ետին. ուստի այս ցախերու, սաղարթներու, կոճղերու ամբողջը երբեմն կը թուի ցրուիլ, մխրճուիլ խէժոտ կիսամութին, հետախաղաղ կորսուիլ:

Խոտերը կը պառկեցնեմ, կը ճգմեմ, կը սահիմ, պիտի անցնիմ: Կը կոխկուտեմ: Քայլ մը աւելի վեր: Յետոյ՝ քայլ մը աւելի վար, շրջանցելու համար մոխրացած բունի մնացորդ մը որ թերեւս ձմեռնային պատմութեան կայծակը զգեստնեց: Յամբած առուի հուններ, բացակայ հեղեղատ: Ապա՝ գոհունակութիւն մը հաստատ գետին մը գտած ըլլալու:

Մեկներ, հասեր եմ յետնաշխարհ:

Անեզը շրջագիծը հետս կը տանիմ որքան յառաջանամ, միշտ հոս, միշտ հիմա: Կարծես բան մը կ'աճի անդադար, կ'ընդլայնի, շրջանակային շարժում կը թուի, կը խուսափի, վերասլաց՝ կ'ողողէ գիս ու կը լքէ: Շրջանը կարին միւս կողմը՝ կարծես էջի սրբնթաց թերթում մը ըլլար: Միշտ դարձող, նոյնը:

Բզկտուած խոտերու հոտ:

Երբ հեռացայ տափնուած ճամբէն, բռնեցի կածան մը, այն որ նշմարեցի, շաւիղներէն որեւէ մէկը՝ որ հետըզհետէ կորսուեցաւ թուփերուն մէջ: Բոլորն ալ կ'առաջնորդէին նոյն տեղը թերեւս, ինչպէս բառերը կ'երթան տող առ տող ու ոտք ի ոտք լեզուի անկիտելի կեդրոնը կամ բոլոր քայլերը՝ մինչեւ սահման մը անսահման: Խոտերը աւելի ու աւելի բարձրացան, ծանօթ տունկերը նուազեցան, խառնուեցան անծանօթներուն: Բոլորովին անհետացան զանազանութենէ գուրկ ծփանուտի մը մէջ: Կորսուեցայ թերեւս ես ալ, քիչ մը:

Ինչպէ՞ս ըսել այն որ դէպք չէ:

Հիմա կը տեղափոխուիմ մինչեւ սրունքներս հասնող բուսականութեան մը մէջ: Մերթ չոր, մերթ խոնաւ: Զեռուն: Տունկերը կը բզզան, աներեր կը դեղեւեն, արեւադարձութեամբ մը խանդագին կը տարուին թեթեւ լոյսի տենդէ, կը յենին իրարու, մտերիմ իրարու, գուցէ նաեւ հսկող մէկը միւսի աճին, շառաւիղի տիրակալութեան, միախառն ու անջատ կը յորինեն ուղղական ալեկոծ դարվեր մը, տեղ-տեղ վէտվէտուն. պտեր, երինջ, վայրի որթեր կռնած, գաճաճ շոճիներ, տերեւի թափթփուք, փշուրներ, գերփնամած բուններ կրող սղոցումի քերթուքներ որ մեքենայ ու գործիք ձգեր են ատաղձին, եւ դեռ թուազրուած անկեալ սիւներ՝ փայտեղէն մանրակրկիտ ճարտարապետութեան մը համար: Ի՛նչ ամեհի երկրաբանութիւն մանրամասնութեան՝ որ աչք ու ձեռք կ'ամփոփեն: Կը ջանամ միշտ անունները գտնել, չգառածիլ: Զիս կը կապեն ցանցի մը որ կը տանիմ հետս: Յետոյ ի վերջոյ անոնց շնորհիւ առանձին չեմ, կրնամ կողմնորոշուիլ, շրջիլ հոս-հոն, դառնալ հոժ, ի խոյզ երեւակայական համասփիւռ ծաղիկին, ամենաբոյր, բազմագուն-

եան, ստեղնաշօշափ, որ անկասկած ցանկագրուած է արդէն բոլորաբանութեան ամենագէտ տոմարի մը մէջ: Ըսի, առանձին չեմ: Անուանները զիս կը կանխեն, կը սպասեն որ զիրենք յանձնեմ հողին, հիմնեմ:

Երկինքը կանաչի երանգներ առած է, ասիտէն, արջասպէն բորբոսած թաս, շրջուած հող. բայց որքան մագրցիմ այլեւս այնքան կը մտնեմ խորութեան մէջ: Գուցէ անոր ձգողութեան:

Վերէն հասնող ճառագայթ մը կը թափանցէ ճիւղերը, կը մաղուի, օդառկախ ճճիներ, ոսկիի գանակներ, փոշի, թեթեւ բզրբոց: Կռինչ մը տքուն, կքացող գերանի՝ որ ինկաւ: Այլեւս ո՛չ մէկ աղմուկ: Բացարձակ լռութեան մը զգայութիւնը, «որպէս շուշան ի մէջ փշոց», ո՛չ մէկ շուշան ու կաքաւիկ, այլ ինքնահուն մտմտուքը միայն ծառերուն. ծառերը լռականութենէ առնուած, կարծես բխող հնչականութիւն մը ըլլային գօրին: Ինչպէս առաջ, անշարժ ու շարժուն: Եթէ կար առաջ մը, եթէ կար շարժում մը որ անշարժը կրէր ու պարզէր, քերթուածով մը առաջին: Իսկ ես ո՛չ թէ ձորի մը մէջն եմ, այլ խորքին հովիտի մը: Եւ քայել այսպէս յառաջանալ է գունդի մը կեղրոնէն, կորիզէն, ներքին մակերեսէ մը դէպի դուրս, աճման սփռում, ընթացք տալ է ձայնի մը, ընդառաջել է ձայնի մը որ կազմուեր է շատոնց, մոռացումէն, տիեզերաստեղծումէն, խտացեր, պնդացեր, ծաւալեր է եւ թոյլ կու տայ որ ոտքս դնեմ մերթ հոս, մերթ հոն, քրքրեմ հողը, արթնցնեմ մացառուտքն ու մնացօնքը: Յրիւ, չոր ու սուր ճիւղեր կը քսուին դէմքիս երբ չեմ յաջողիր ձեռքերով անոնց մէջէն անցք մը յօրինել բուսեղէն լաբիւրինթոս: Բորբոսի, փտտող տերեւներու, փայտի ու նեխող բաներու գոլորչի: Յնդաբանութիւն:

Փոշիացում: Ուտքով կը քերթեմ մամուկալած ժայռի մակերեսը: Ո՛չ մէկ նշան, ընդհողուած աւերակ, անդրըջրհեղեղեան արձանագրութիւն՝ որ թելադրէ «Անցորդ, յիշէ՛»: Անցո՞րդը, մնացո՞րդը, տողի ու տեղի ճգնո՞ղը, վկա՞ն՝ ե՞ս: Ինչ որ կար զիս գոհեց. զրկեց իրմէ: Ժանգ, բուսահող, ծղօտներ, վայրի ծաղիկներու սոխեր, բիծեր ու նիչ, բառի կոխուածքներ: Բոլորը կան, կը հաստատեն իրենք զիրենք: Ետիս ու առջիս, գրեթէ նոյն տարածութիւնը կորընթարդ, որ կը կրէ զիս վիհն ի վեր: Վերացումը կ'արտաքսէ, կ'արձակէ զիս շուքերուն մէջ, ինչպէս համատարած ստուեր մը մէկէն կը դազաթի, արդէն գայն գրաւեց զիշերը:

Յառաջանալն է կարեւորը, տարաշխարհելը: Եթէ կայ աշխարել, ըլլալու է նաեւ տարաշխարհել. ոչ թէ խրզել կապերը աշխարհի հետ, այլ խրիլ անոր մէջ. ամէն քերթուած արմատացմա՞ն կը դիմէ: Աշխարհին տա՞ռը: Կամ խարանը խօսքին վրայ:

Խօսքը երբեմն կ'ուզէ խառնուիլ հովին, անտառատակի ստուերուտին, ցողունի վրայ ինկած շաղի ցոլացումին, կ'ուզէ խոնարհիլ մինչեւ հող, երկրպագել զըրեթէ նեխող խոտերուն, հպիլ անոնց բնաբուն ոճին, եւ երբ ականջը կը հեռանայ թնդիւնէն՝ կը դառնայ մէկէն ամրափակ ու հնչեղ լաբիւրինթոս: Ըսի բուսեղէն, հիմա թրթռացող ու խուլ: Անտառը կ'արթննայ մոռացումն ի վեր: Զանցեր է զիս փայլակի մը պէս որ կը հատէ լեզուն:

«Տար զիս հոն, տարագրէ՛ ուր կա՛ս դուն»:

Կարելի չէ ամէն բան ըսել, տաշեղներու շքեղ ու անգուսպ շռայլանք, Մէկի սերմնահոսք, երբ ամէն բան կը գտնուի նոյն ատեն, նոյնաժաման, կը դիմադրէ, կը ցցուի, յետոյ կը յայտնուի խորքը, միանուագ, շերտ առ

չերտ, ճակատային, զանգուլակ, մերթ կոնաձեւ, մերթ խորհրդագգած: Խորքը հեռաւոր, շատ հեռուն գրեթէ անմատչելի թրթռացում մըն է նոյնաչէշտ: Մարմին մը: Կապիճ մը աչքի: Մետաղային, արձանային: Ալիքաւոր յօրանջ: Զանգի մը գմբէթը՝ որ կը դողանջէ միակ սուլոցի մը բարձրակէտին: Կը տարասփռէ, գլխու պոռոյտ կու տայ երբ յեներ եմ բունին: Եթէ պոռամ... Բայց ի՞նչ հարկ ճիշի: Արդէն բաւական արմատախիլ եմ ու խուլ: Արդէն բաւական խլուած եմ ես ինծմէ: Քալելը կը քակէ անձ-կուլիւնը հողէն մինչեւ հաւանական արեւազալ մը, հոն, վերը, վերեւը աչքերուն: Մինչեւ արձագանգ մը որ ձայնին սահմանն է, անոր քայքայումը, ոչ, անոր լրումն իսկ: Քալելը հիւրընկալել է անդառնալի քայքայումի մը հրաշագործ գալուստը:

Կարելի՞ է ըսել որ դիմակալել է, զայն ընկալել: Ծառանալ անոր դէմ ու զայն առնել-բառնալ: Բառո՞վ, բառի առքո՞վ: Ի՞նչ մոգական կռիւնչ փորփորումին մէջ, ակնախտիդ երգ ու պատկեր, կարծես ըլլար կիկլոպեան ժայռ առասպելօրէն նուաճած այս անտառը:

Օ մտածումին խարդաւանանքը, որ անելին մէջ՝ կասկածին ու տքնանքին, կը փնտռէ, կը գտնէ նեցուկ ու յենարան, նախագիծ ու ոտնահետք, անջրդի օրուան մէջ կաթիլի բիւրեղէ պատրանք, ապաշխարհ ու քերթըւած, կ'ուզէ, կը ջանայ, կը ճգնի պահպանել ինքզինք խորտակումէն: Կեղեւնուտի, յոյզի, հոգիի յորդում կ'ըսեմ եւ ինծի, տեսակ մը ներկաց հոգեգալուստ մը՝ շնչելու, պարզապէս ըլլալու համար նուազ արմատախիլ, նուազ կարօտախտաւոր: Թերեւս ա՛լ աւելի հիմնովին գերծելու ամէն արմատէ, ինչպէս ճիւղերու ճեղքին աճող մոլախոտ, մակարոյծ խոլորձներ որոնք սպա-

ռող խոնաւուլիւնն ու փայտի ճաթուն քայքայումը կ'այլափոխեն ծիրի, կոկոնի մինչեւ որ լոյսի, բախտի, անակընկալի, իմաստութեան ու ցուրտի հոյգ մը յանկարծ զայն կը հոյակերտէ հրաշափայլ ցայտքի, սլացող օղին մէջ, ոչ մէկ սոխակի, ոչ մէկ նայուածքի, ոչ մէկ ընդունողի կամ մերժողի համար:

Համասփիւռը չի գիտեր ինչուն... իսկ ես միայն երաշտը սկզբնական:

Եթէ դառնամ ետիս՝ կը թուիմ մակընթացող ալիքի մը ծայրաւանդ կատարին, որ կը թաւալի, կ'ոլորուի, կը խոնարհի դէպի սկիզբ, եւ զիս՝ խոտորագնաց փայտի բեկոր, պիտի արձակէ դուրս հունէն, հաւանական հրդեհումի մը համար:

Օ մեղրամոմէ երկու թեւեր ու ոչ մէկ ձեռք որ հպէր ճառագող անունի մը էական:

Սակայն սկիզբը կեղրոնը չէ, սկիզբը կայ երբ կը յառաջանամ, աջ ու ձախ, վեր ու վար, խօլական սրտէն պատանի մինչեւ ահարեկ ընկճում: Առանց որեւէ ճակատումի: Հետախաղաղ խուսափումի մը համար: Մարդ չի գիտեր ե՞րբ սկիզբ մը կ'ըլլայ. վերջաւորութեան: Յետի՞ն ժամուն, առաջին փոխաբերութեան: Ասոնց միջեւ խորքը՝ դաժան, եկող-չհասնող, տարաժամող-յամեցող, խժրժման արեգակ:

Բոլորականաձեւ՝ բուները կը դիմեն նոյն կիզակէտին, կը յամառին, կը յիշեն, կը վերականեն, կը կուահեն այն որուն չհասան: Կեղրոնը որ թերեւս չկայ: Զայնը նիւթն է այերացած, գտուած, ցնդած, ոգեղինացած: Ատաղձէ՞ն՝ որ ծառերը կ'արտադրեն խուլ մոլուցքով: Տարագրուած: Տառագե՞րծ: Ան(տառ)ացած: Բայց ձայնը մակաբերող մտմտուքն է երբ հետքերը չկան: Ճերմակ կայծակի մը

պէս՝ յանկարծ որ կը դղրդացնէ անտառը ճարճատող, կը զգեստնէ գիս: Բացատրին մէջ՝ ահա... այրած հող: Ապալեր շէկուծիւն, յանկարծակի բռնութիւն մը վայրի որ կը դիմէ խաւարակուլ կանաչի:

Բառերը չեն պակսիր երբեք, ո՛չ, աւելորդ են մըտային շարահիւսութեան համար կերպարանաւորող իր մէջ իր բռնակալ քերականութիւնը դուրսի:

Կը բնակիմ գաղթող ձայնի մը դիտման կէտին, ձեւաւորումին՝ որ երբեմն կը լուսաւորուի, կը մթնէ յաճախ: Կարելի չէ անուները ծամել հողին կառչած լեզի ծոթրինի պէս, լորձնոտել համ ու տաղասացութիւն, ելլել անտառէն առանց հատելու ամբողջ խըշրտուքը տառերուն՝ որոնց վստահեցայ երեւմուն ու խորտակում:

Պիտի աչքերս փակեմ: Լուութիւնը կը դիմանայ մինչեւ կէտը ուր գիշերն ու ցերեկը կը շփոթուին: Ուրուաչէն քերթուածի մը համար ապարան:

Ձայնը կը ձգէ ետին՝ ոչինչ:

Ինչ որ կը յիշեմ անկէ շլացուցիչ կորուստ մըն է:

Կարելի չէ անտառէն դուրս գալ առանց մտնելու անապատ:

Փսփսուք, խարշափ, թրթռացում. կենդանի եմ:

Գրիգոր Պըլտեան

~ «ՄՆԱՍ ԲԱՐԵԱՒ ՈՉ ՈՔԻ» ~

Նորէն կ'ուզէի հանդիպիլ, հակառակ անոր որ վերջին մեր հանդիպումին տարօրինակ նախագագացում մը ունէի, թէ այս կրնար եւ մեր վերջինը ըլլալ: Եղա՛ւ:

Շահնուր «Թերթիս Կիրակնօրեայ Թիւ»ին մէջ կը գրէ՝ «Օրեր կան որ մահագոյ կը ստանամ»: Ես ալ 25 փետրուարի առաւօտեան, «Ազդակ»ի Յրդ էջին մէջ կարդացի մեկնումը այս աշխարհէն, անվերադարձ ինչպէս կ'ըսէիր. «Ամէն ալիք սիրոյ խոստում, ամէն ալիք դարձեալ մեկնում, ողջոյն գալիք հեռուներուն»: Հեռուներ որոնցմէ ետդարձ չկայ: Հայէպէն Այնճար, Վենետիկ, Փարիզ ապա Հայաստան նոյն ողջոյնով դիմաւորեցիր կեանքը, յաճախ «Աշխարհի յետոյքին մատ տուած»: Սէնի փիերէն մինչեւ Սեւանի փիին լուռ ծուարած Նորատուգի խաչքարերուն մէջ, հողիդ նոյն բանաստեղծական արցունքը թափեց, անբաժան գաւաթ մը օղիիդ առջեւ:

Կը յիշե՞ս ինչպէս առաջին անգամ երբ Վենետիկի մէջ իրար հանդիպեցանք, թելադրեցիր որ բանաստեղծութիւնը գտնեմ սրտիս մէջ եւ «նորեր»ուն պէս «նորարար» դառնալու մարմաջով տարուած չկորսնցնեմ իրաւը, մարդկայինը որ սրտէն կու գայ ու կ'անցնի մտքէն: Իսկ երբ տարիներ ետք առաջին հատորս ղրկեցի քեզի, առաջին ու միակ նամակ պատասխանդ ստացայ, ուր կ'ըսէիր թէ լաւագոյն նուէրն է որ կեանքիդ մէջ ստացած էիր: Հաւանաբար ոչինչ կուհեցիր, բայց ներշնչումս անցաւ գիրքերուդ էջերէն ու մտերմութենէդ: Փարիզի տանդ մէջ էր որ 1985ի ամբան, շրջապատուած

մտաւորական ընկերներովդ մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր, մտանք ու ելանք հայ գրականութեան անդաստանէն ներս:

Երկու բան կայ որ կը չարչարէ միտքս. մէկը ան որ դարձած ես անմիջական բացական ու ալ չկաս իբրեւ մարմին ու միտք, բայց կայ նաեւ մխիթարութիւնը, ինչպէս դուն ըսած ես սիրելի բանաստեղծ բարեկամիդ՝ Յարութիւն Կոստանդեանին, թէ «քեզ գտնելու համար այլեւս հազարաւոր քիլոմեթր չեմ կտրեր. քեզ – հին օրերուն պէս – զգալու, շնչելու, սիրելու համար», այլ կը բաւէ բանալ գիրքերդ ու հոն է որ մարմին կ'առնէ մտածումդ ու կը բեղմնաւորուի յիշատակդ: Զուլալ, այս առտու կարծես հետդ է որ կը խօսիմ, դէմ դիմաց, բացած գիրքիդ էջերը, եւ հակառակ անոր որ կ'ուզեմ բարկանալ քեզի «փախուստիդ» համար, բայց քու խօսքերդ աւելի ծանր կը կշռեն ու գլխահակ կը շարունակեմ կարդալ ու զգալ լոյսը տողերուդ ընդմէջէն: Երկրորդ բանը այն է որ ոչ Փարիզը եւ ոչ ալ Երեւանը ալ զիս պիտի կանչեն: Ինչպէ՞ս կրնամ մտնել «Յառաջ» եւ քու մասիդ չհարցնել, 61 թիւ Ռըչըշուարի առջեւէն անցնիլ ու կարենալ առանց յուզումի ճամբաս շարունակել: Հապա Երեւանը որ դարձած էր վերջին քանի մը տարիներուն մեր ժամադրավայրը: Իսկապէս գաղափար չունիմ թէ ի՞նչ պիտի փնտռեմ երբ Նորատուզ այցելեմ:

Կեանքի պայմանները ստիպած էին քեզի հեռանալ հարազատներէդ ու հաստատուիլ Փարիզ: Պարբերաբար անոնց հետ հանդիպումներդ սիրտդ կը լեցնէին ուրախութեամբ: Բայց մանաւանդ ուրախ էի երբ լսեցի որ 38 տարուան բացակայութենէ մը ետք կըրցար երթալ Այնճար ու տեսնել եղբայրդ՝ հայրս, որ միշտ հպարտ եղած

է իր կրտսեր եղբօրմով:

Իբրեւ հարազատ, անկարելի է որ մարդ չտխրի մահուան ի տես որ կը կլանէ մեր ամբողջ էութիւնը: Չէ՞ որ «Յուդարկաւորի տրամադրութեամբ, ո՞վ կրնայ կանչել – փա՛ռք ապրողներուն»: Չէ որ իբրեւ մարդ զգալու եւ շօշափելու, հանդիպման պահուն քեզ հետ գիրկընդխառնըւելու պակասն է որ մղձաւանջի կը վերածուի. այլեւ «փառք ապրողներուն»ը իբրեւ սփիւռքահայ բանաստեղծ կը դառնայ քու փառքիդ կոչումը, որմէ փախուստ կուտայիր ամէն գնով: Արդեօք զիտե՞ս որ մահդ իր Ֆիզիքական կորուստէն աւելի հայ գրականութեան համար դարձաւ վերջակէտ մը, ժամանակաշրջանի մը աւարտը, որովհետեւ Փրանսահայ գրականութեան այն սերունդը որ իր մէջ ունէր Շահնուր եւ Կոստանդեան իր գոյութիւնը կը պահէր անուճով:

Բնաւ քու գործերուդ մասին չէիր խօսեր: Քեզի համար հայոց միջնադարեան գրականութիւնը նուաճած էր ամէն գաղաթնակէտ: Քեզի համար գրականութիւնը ապրելու միջոց մը չէր. չէր կրնար ըլլալ, այլ ապրելու ձեւ մըն էր շնչելու, դառնալու, ըլլալու:

Քանի ամիսները կ'անցնին, այնքան կը խորանայ բացակայութեանդ զգացումը, որուն ի տես սիրտս կը լեցուի յուսահատութեամբ: Եթէ միայն կարենայի գերեզմանիդ վրայ արեւածաղիկ մը ցանել, որ իր կարգին ծաղկէր ու լոյսին դառնար եւ այդ լոյսը արմատաւորուէր հողին տակ քեզ հետ նոյնանալու, քեզ հետ նոյնանալու Բանին հետ, որ «ի սկզբանէ» էր... յաւիտեան

Արա Գազանճեան

~ ԶՈՒԼԱԼ ԳԱԶԱՆՃԵԱՆ ~

(1936-2009)

Բանաստեղծ մը մեռաւ:

Արեւոտ օր մը, երիտասարդ մը կը բարձրանար հա-
րաւային Ֆրանսայի լեռնային գիւղերէն մէկուն ցից
ճամբաներէն, կ'երթար հանդիպելու իր շատ սիրած բա-
նաստեղծին՝ Յարուի Կոստանդեանին, ձեռով մը քերթո-
ղական իր ուխտը ընելու կարծես:

Այդ օրէն Զուլալ Գազանճեանի քերթողական ճա-
նապարհը ճիշդ նոյն ձեռով ընթացեր է՝ ցից ու դժուար,
բայց միշտ դէպի վեր, դէպի կատարելութիւն ձգտող: Իր
քերթողագիրքերը վկայ, որոնցմէ իւրաքանչիւրը կու
գար յաւելում մը բերելու նախորդին վրայ:

Ծնած է Մուսա Լեռ, ապրած է Հալէպ, ուսանած է
Վենետիկ, հաստատուած է Փարիզ, եւ ամէն հաւատաւոր
հայու պէս, վերջին տարիներուն կ'ապրէր քիչ մըն ալ
Երեւան:

Զուլալ չէր անունը (Ռուբէն). բայց ինչ որ ծածկա-
նուն պիտի ըլլար, այնքա՛ն ամբողջականօրէն կը թարգ-
մանէր իր էութիւնն ու քերթողութիւնը միաժամանակ,
որ մոռցուեցաւ անունը եւ մնաց Զուլալը՝ վճիտ ու մաքուր
իր էութեամբ թէ բանաստեղծութեամբ:

Բանաստեղծներու երկու տեսակներ կան՝ անոնք, ո-
րոնց բանաստեղծութիւնը ոչ միայն կապ չունի իրենց
մարդկային կերպարին հետ, այլ եւ ճիշդ հակառակ դիրքի
վրայ կը կենայ այդ կերպարին, եւ երկրորդ խումբը բա-
նաստեղծներու, որոնց բանաստեղծութիւնը հայելին է
իրենց մարդկային կերպարին: Այս վերջիններէն էր

Զուլալ Գազանճեանը, որուն հոգին՝ տաք եւ անմիջական,
կը թափի տողերուն մէջ ու կը յորդի էջին վրայ:

Բանաստեղծի մը կենսագրութիւնը, որ կը սեղմուի
երկու թուականներու միջեւ, ոչինչ կ'ըսէ մեզի իր կեան-
քին մասին: Զուլալին պարագային տարբեր էր. եւ որով-
հետեւ քերթողութիւնը իր կեանքն էր, մենք գինք կը
գտնենք իր քերթուածներո՛ւն մէջ՝ իր սէրերն ու տառա-
պանքները. եւ մեծ, չպարտկուող լոյս մը, որ այնքան
պայծառ կ'ընծայէ իր տողերը:

Լոյսի անսպառ երգիչն է ինք. լոյսը թէ՛ որպէս բառ,
թէ՛ որպէս խորհրդանիշ ու ներոյժ, միշտ ներկայ է իր
տողերուն մէջ:

Վերջին ռոմանթիքն է ան սփիւռքահայ մեր բանաս-
տեղծութեան. իրեն համար քերթուածը կը մնայ ապ-
րումներու եւ մտորումներու արտայայտութիւնը, որ
միշտ, յանապագօր հացի պէս կը փնտռէ գեղեցկագոյնը
արտայայտամիջոցներուն:

Միաժամանակ սակայն արդիական է ինք, ժամա-
նակին մարդն է. ու եթէ չ'արտայայտուիր այս ժամանակ-
ին ձեւերով, կ'արտայայտէ իր տխրութիւնը, ի տես այս
ժամանակներուն:

Հաւանաբար Զուլալ Գազանճեան մէկն է այն քիչե-
րէն, որոնք խորապէս գիտակ են արեւմտահայերէնին,
եւ զայն դարձուցած են գեղեցկագոյն քոյր մը, իրենց
կեանքին համար: Ասոր վկայութիւնն է, քերթողա-
գիրքերուն կողքին, իր կոթողային աշխատանքը, երկու
հատորներով լոյս տեսած՝ միջնադարեան տաղերգու-
թեան եւ արձակի հաւաքածոներ, իրենց արեւմտահայե-
րէն փոխադրութիւններով:

Ինչպէս ըսի, Զուլալ Գազանճեանի իւրաքանչիւր

քերթողագիրքը յաւելում մը կը բերէր նախորդին: Քառասուն երկար տարիներու ընթացքին միայն չորս քերթողագիրքեր հրատարակելը կը հաստատէ իր բծախնդիր մօտեցումը քերթողութեան, իսկ իր սակաւագրութիւնը կու գայ իր խորունկ սէրէն, որովհետեւ մեծ սէրերը շատախօս չեն ըլլար:

Առաջին քերթողագիրքը՝ «Կեանքը-Քոյրս» գրաւած էր օրուան կարեւոր դէմքերուն ուշադրութիւնը: Յաջորդը՝ «Արեւծաղկի մը Նման», կը հաստատէր առաջինով տրուած խոստումը: Երրորդ գիրքը՝ «Շարունակելի», կը բերէր սպասուած հասունացում մը, քերթողական վայելք պարգեւելով ընթերցողներուն: Իսկ չորրորդը, եւ դժբախտաբար վերջինը՝ «Նորատուգ»ը...

«Նորատուգ»ը ա՛յլ որակի գործ է. եւ բնաւ պատահական կամ զարմանալի չէ, որ Գագանճեան, հակառակ ստեղծագործելուն, այլ գիրք մը չէր հրատարակած տակաւին: «Նորատուգ»ը գագաթ մը նուաճած է: Այլ գագաթ մը գրաւելը ժամանակի պիտի կարօտէր: Բայց ժամանակը ազնիւ չգտնուեցաւ Զուլալ Գագանճեանի հանդէպ, որ անողոք հիւանդութեան մը ճիրաններուն մէջ ինկած էր արդէն:

«Նորատուգ» ...

Քսան քերթուածներ, քառահամար եւ քառատող, կը կիրարկեն մեր քերթողութեան չափի, յանգի եւ կշռոյթի օրէնքները, առանց խախտումի, առանց զնացքէն չեղելու. յանգերը այնքան ճիշդ են, որ, փարատոքսային ձեւով, յաճախ չենք իսկ անդրադառնար անոնց:

Այս խիստ դասական ձեւին մէջ, Զուլալ Գագանճեան կրցած է այնպիսի ժամանակակից, մեզ յուզող խորք դնել, որ ընթերցողը կրնայ միայն հիանալ: Այսօրուան

հայուն, մանաւանդ սփիւռքահայուն բոլոր տազնապները այնտեղ են՝ սփիւռքի մարդուն կացութիւնը, հայրենիքը, արեւմտահայերէնին ճակատագիրը եւ մեր գրականութեան այսօրուան վիճակը: Այս բոլորէն անդին ունի՞նք այլ տազնապներ՝ հայրենիք, լեզու, գրականութիւն:

Եւ ասիկա այնպիսի ապրող, այժմէական լեզուով, որ միայն ի՛ր նման բանաստեղծ մը պիտի կարենար ընել:

Զինք ճանչցողներուն համար, եւ անոնց թիւը յաւելում կրեր էր վերջերս, իր Հալէպ կեցութեանն ետք, բանաստեղծ Զուլալ Գագանճեանի կորուստը իրապէ՛ս ցաւալի է. խորապէս բանաստեղծ ըլլալու կողքին, խորապէս մարդ էր, իր համեստութեամբ փայլող: Քանի քանի հարցազրոյցներ մերժած է. նկարուիլ չէր սիրեր, եւ խօսելէ աւելի մտիկ ընել կը սիրէր: Ու կը լռէր երկար, իմաստուն լռութեամբ:

Իր շատ սիրած բանաստեղծին՝ Յարութ Կոստանդեանին նման զնաց առանց հրաժեշտի՝ «մնաս բարեալ ոչ ոքի...»:

Իր քերթուածները մեզի բարեւ կ'ըսեն, իրենց լոյսով: Այսօր բանաստեղծ մը կ'ապրի՛ մեր մէջ:

Մարուշ Երամեան